



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՉԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան այս շաբաթասկիզբին կը մեկնի Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի յարկին տակ մասնակցելու համար շարք մը ժողովներու, հանդիպումներու եւ Ս. Պատարագի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին բարձր հովանաւորութեամբ այս շաբթուան ընթացին տեղի պիտի ունենան Թեմակալ Առաջնորդներու եւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական եւ Բաղաքական ժողովներու նիստերը:

Առաջնորդ Սրբազանին կողքին, այս ժողովներուն պիտի մասնակցի Ազգ. Վարչութեան ատենապետուհի՝ Տիկին Ռիմա Պողոսեան:

PRELATE TO TRAVEL TO LEBANON TO PARTICIPATE IN MEETINGS AT THE CATHOLICOSATE

Early next week H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will travel to Lebanon to participate in meetings at the Catholicosate of the Holy See of Cilicia in Antelias led by H.H. Catholicos Aram I.

The Prelates of the North American Prelacies, members of the Central Religious and Executive Councils, and Executive Council members from the three Prelacies will participate in the meetings.

Joining the Prelate at the meetings will be Prelacy Executive Council Chair Mrs. Rima Boghossian.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 24 Հոկտեմբերին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետե Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Յընթացս Ս. Պատարագի, Թեմիս եկեղեցիներու բեմերէն պիտի ընթերցուի Թեմիս Կիրակնօրեայ վարժարաններուն հիմնադրութեան 80րդ տարեդարձին առթիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի յղած կոնդակը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. SARKIS CHURCH

On Sunday, October 24th, the Prelate will preside over Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena and deliver the sermon.

During Divine Liturgy in all Prelacy Churches, the Pontifical Encyclical of H.H. Catholicos Aram I on the occasion of the 80th anniversary of Prelacy Sunday Schools will be read.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Կիրակի, 24 Հոկտեմբերին, Հայ Դատի յանձնախումբին տարեկան ձեռնարկը տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 5:30-ին, Universal City, Sheraton պանդոկին մէջ:

Պիտի պատուընունենալ Հայ Դատին զօրակից՝ պետական դեմքեր, արուեստագետներ, եւ գաղութին ծառայողներ: Քոնկրետական Հաւուրտ Պըրման պիտի արժանանայ «Տարուան Մարդը» տիտղոսին, իսկ խորհրդարանի անդամ Չարլզ Քալտերոն՝ «Legislator of the Year» տիտղոսին: Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննեսեանի պիտի տրուի «Կեանքի Իրագործումներու» տիտղոսը, իսկ Տիար Չարլի Կալեանի՝ «Ժառանգութեան» մրցանակը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:

Ձեռնարկին ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգային Վարչութեան անդամներ:

PRELATE TO DELIVER INVOCATION AT ANC-WR ANNUAL BANQUET

The annual banquet of the Armenian National Committee Western Region will be held on Sunday, October 24th, 2010, at the Universal Sheraton.

During the banquet, Congressman Howard Berman will be honored as Man of the Year, Assemblymember Charles Calderon as Legislator of the Year,

Prof. Richard Hovannisian with the Lifetime Achievement Award, and Mr. Charles Ghailian with the Legacy Award.

The Prelate will attend and deliver the invocation.

Executive Council members will also be in attendance.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ UCLA-Ի ՄԷՋ

Շաբաթ, 23 Հոկտեմբերին, միօրեայ գիտաժողով մը տեղի պիտի ունենայ UCLA համալսարանի Dodd Hall հանդիսասրահին մէջ:

Խորհրդածողովը կազմակերպուած է UCLA Համալսարանի մարդու իրաւունքներու միջազգային օրէնքի ընկերակցութեան կողմէ եւ կը վայելէ հովանաւորութիւնը Հայ Դատի Յանձնախումբին:

Համագումարին ընդհանուր խորագիրն է «Հայոց Ցեղասպանութեան փոխատուցման իրաւաքաղաքական հարցերը»: Չեկուցումներ պիտի ներկայացնեն քաղաքական ղեկավարներ, իրաւաբանութեան եւ փիլիսոփայութեան փրոֆեսորներ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ համագումարին:

UCLA CONFERENCE ON THE ARMENIAN GENOCIDE AND THE REPARATIONS MOVEMENT

On Saturday, October 23rd, 2010, scholars from around the world will gather at UCLA's Dodd Hall Auditorium to discuss the Armenian Genocide during a conference hosted by the International Human Rights Law Association at UCLA in collaboration with the ANC-WR. The conference is entitled "Genocide and Then What? The Law, Ethics, and Politics of Making Amends".

On behalf of the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian will attend the conference.

ՀՈՒՆՎՈՒՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՕԾՈՒՄ

Ս. Կարապետ Մայր Եկեղեցոյ մեծ ընտանիքին համար տօնական օր մը եղաւ Կիրակի, 17 Հոկտեմբեր 2010ը: Հակառակ կլիմայի աննպաստ պայմաններուն, Եկեղեցին լեցուն էր հաւատացեալներու խումներամ բազմութեամբ:



Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Եւ անմահ Պատարագը մատոյց Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, իրեն առընթերակայ Եւ Ս. Սեղանին սպասարկող ունենալով եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Վիգէն Աւ. Քիւյ. Վասիլեանը: Յընթացս Ս. Պատարագին Եւ քարոզել առաջ, «Չորս ըստ պատկերի քում ստեղծեր» շարականի

երգեցողութեամբ՝ Առաջնորդ Սրբազան Հայրը թափօրով բեմէն ատեան առաջնորդուեցաւ Եւ ատեանի առջեւ դրուած Ս. Սահակ Պարթեւ Հայրապետի Եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի երկու մեծ սրբապատկերները, ինչպէս նաեւ յաջորդաբար Ս. Յակոբ Մծբնացի Հայրապետի, Ս. Ստեփանոս Սարկաւազի, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Եւ Ս. Յովհաննէս Մկրտիչի փոքր պատկերները օծեց: Հոգեւոր խանդավառութիւն կը տիրէր բոլոր հաւատացեալներու սրտին մէջ, մանաւանդ սրբապատկերներու նուիրատուներուն՝ Տէր Եւ Տիկին Մեսրոպ Եւ Անահիտ Աբրահամեաններուն, Տէր Եւ Տիկին Սահակ Եւ Լուսինէ Մանուէլեաններուն ու Տէր Եւ Տիկին Մայք Եւ Վարդուկ Վանլեաններուն, որոնք ներկայ էին արարողութեան: Սրբանկարներու բարերարներէն Է նաեւ Թանիա Փափագեան:

Իր քարոզին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը, անդրադառնալով Մշակոյթի Ամսուան ընթացքին Ս. Սահակ Պարթեւ Եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի պատկերներու օծման, ըսաւ. «Անոնք մեր ժողովուրդի գաւակները առաջնորդեցին Եւ մեր ազգը հիմնաւորեցին: Հայ ժողովուրդը հոգեպէս զինեցին հայ գրականութեան թարգմանութեամբ: Այս պատկերներու ընդմէջէն սուրբերու բարեխօսութիւնը պիտի խնդրենք, որպէսզի մեր խնդրանքները արագ հասնին Աստուծոյ»:

Սրբազան Հայրը, ակնարկելով օրուան Աւետարանի ընթերցումին, ուր Յիսուս կը մէջբերէր Եսայի Մարգարէի խօսքը՝ «Տիրոջ Հոգին վրաս Է որովհետեւ օծեց զիս Եւ դրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, աւետելու՝ թէ գերիները պիտի ազատագրուին, կոյրերուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին. Եւ յայտարարելու թէ ահա հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը», մաղթեց որ Տիրոջ հոգին մեզի հետ ըլլայ: Ան ըսաւ. «Աստուած արեւը կը ծագեցնէ արդարներուն Եւ մեղաւորներուն Եւ կը համբերէ մինչեւ բոլորը Աստուծոյ փրկութեան աւետիսը լսեն Եւ Աստուծոյ դարձի գան»:

Առաջնորդ Սրբազան հայրը նաեւ օրհնեց նուիրատուները: Յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն, ապա Առաջնորդ Սրբազան Հայրը թափօրով ուղղուեցաւ եկեղեցւոյ գաւիթը, ուր երգուեցաւ «Կիլիկիա» մաղթերգը:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AND CONSECRATES SACRED PAINTINGS AT ST. GARABED CHURCH



On Sunday, October 17th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and consecrated sacred paintings at St. Garabed Church in Hollywood. Parish Pastor Archpriest Fr. Vicken Vassilian assisted at the altar.

Prior to the sermon and accompanied by the singing of a hymn, the Prelate was led down the

altar to consecrate two large paintings of St. Sahag Barthev, and St. Mesrob Mashdots, and smaller painting of St. James of Nisibis, St. Stephen the Proto-Martyr, our Lord Jesus Christ, and St. John the Baptist. Among the hundreds of faithful in attendance were the sponsors of the paintings Mr. and Mrs. Mesrob and Anahid Aprahamian, Mr. and Mrs. Sahag and Lucine Manuelian, and Mr. and Mrs. Mike and Vartoug Vanlian. The fourth sponsor, Ms. Tania Papazian was not in attendance.

Noting that the paintings of St. Sahag and St. Mesrob were fittingly being consecrated during Armenian Culture Month, the Prelate exalted their invaluable contributions to enriching our culture and heritage, and urged the faithful to pray for their intercession through these paintings. Following the sermon, the Prelate blessed the sponsors.

At the conclusion of the Divine Liturgy and requiem, the Prelate was led in a procession to the entrance of the church where the Cilician anthem was collectively sung.

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԶԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ
ԽՈՐՅՈՒՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐՑԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԺՈՂՈՎԻՆ**

3-8 Յոկտեմբեր 2010, Տուրեսի մեջ (Ալպանիա), Ալպանիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, գումարուեցաւ Եկեղեցիներու Զամաշխարհային Խորհուրդի Միջազգային Զարցերու Յանձնաժողովի 50րդ

ժողովը, որուն յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցեցաւ Յանձնաժողովի անդամուհի Վանա Տէր Օհաննեսեան:

Ժողովին գլխաւոր նիւթն էր «միջազգային յարաբերութիւններուն մէջ ի յայտ եկող նոր երեւոյթներ»: Ժողովականներ որոշեցին մինչեւ 2013ի Եկեղեցիներու Յամաշխարհային Խորհուրդի համաժողովը իրենց ուշադրութիւնը սեւեռել խաղաղութիւն եւ ապահովութիւն, գաղթական աշխատաւորներու մարդկային իրաւունքներ, կրօնական ազատութիւն եւ խաղաղութիւն ժողովուրդներու միջեւ բնագաւառներուն: Յատուկ ուշադրութեան արժանացաւ Ճամէյգայի մէջ 2011ին գումարուելիք խաղաղութեան միջազգային համագումարը:

Վանա Տէր Օհաննեսեան գործօն մասնակցութիւն բերաւ ժողովին եւ ներկայացուց Հիւսիսային Ամերիկայի ու Գանատայի շրջանային զեկոյցը եւ միջ-կրօնական յարաբերութիւններու քննարկման ենթայանձնախումբի զեկոյցը: Կրօնական ազատութեան ծիրէն ներս, ան ընդգծեց հոգեւոր պաշտամունքի վայրերու որպէս սրբավայր պահպանման հրամայականը եւ որպէս գործնական օրինակ նշեց Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցւոյ շահագործումը Թուրքիոյ կողմէ:

HOLY SEE OF CILICIA REPRESENTATIVE VANNA KITSINIAN DER OHANESSIAN PARTICIPATES IN MEETING OF THE WORLD COUNCIL OF CHURCHES IN ALBANIA



On October 3-8, 2010, Holy See of Cilicia representative Mrs. Vanna Kitsinian Der Ohanessian participated in the 50th meeting of the Commission of Churches on International Affairs (CCIA), a commission under the umbrella of the World Council of Churches (WCC).

This year's CCIA meeting took place in Durres, Albania, and was hosted by the Orthodox Autocephalous

Church of Albania. The theme was "Emerging Trends in International Relations". In responding to the needs of its member churches, the CCIA decided to refocus its priorities, establishing four thematic working groups to guide their work through the next General Assembly scheduled for 2013. Great attention was paid to the International Ecumenical Peace Convocation which is set to take place in Jamaica in May of 2011.

Mrs. Der Ohanessian drafted and presented the report to the Commission on the regional group for North American and Canada. In

addition, in drawing on the Armenian people's own experiencing dealing with the issue of freedom of religion, she raised the example of the case of the Holy Cross Church located on the island of Akhtamar in present-day Turkey. Mrs. Der Ohanessian also served as rapporteur for the group responsible for addressing boycotts, divestments, and sanctions, which focuses on non-violent means to resolve conflicts in the world.
